ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(2 մարտի, կիրակի, 2000 թ.)

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի վեց սան և Վազգենյան դպրանոցի Ե լսարանի մեկ ուսանող ստացան սարկավագական աստիճան: Այս տարի, ի տարբերություն անցած տարիների, տնօրինությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի, սարկավագ ձեռնադրվելու համար Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ջ լսարանի տասնութ և Վազգենյան դպրանոցի Ե լսարանի երկու սաներ հանձնեցին սարկավագական քննություններ: Քննող հանձնաժողովի նախագահ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը նրանցից ընտրեց յոթին, որոնց ընտրությունը հաստատվեց Վեհափառ Հայրապետի կողմից:

Մարտի 2-ին, Սրբոց Վարդանանց տոնին մատուցված Սուրբ Պատարագի արարողության ընթացքում, կատարվեց սարկավագական ձեռնադրությունը: Օրվա պատարագիչն ու ձեռնադրող եպիսկոպոսն էր Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Պատարգի սուրբգրային ընթերցումներից առաջ սկսվեց սարկավագական ձեռնադրությունը՝ խարտավիլակությամբ Տ. Բաբկեն աբդ. Մալբիյանի:

Նորընծա սարկավագները, ծնկաչոք բարձրանալով Ս. Խորան, ձեռքերը վեր բարձրացնելով՝ «ի տես ժողովրդեան», հրաժարվեցին աշխարհիկ կյանքից:

Ձեռնադրող Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Սուրբ Երրորդությանն ուղղված մեր բազմադարյան աղոթքներն ընթերցելուց հետո, նորընծա սարկավագներին իրավունք շնորհեց սարկավագական խորհրդանիշ՝ ուրար կրելու, Ավետարան ընթերցելու, Սուրբ Խորանին և Պատարագին սպասավորելու:

Հավարտ ձեռնադրության, Գերաշնորհ Սրբազան Հայրն իր խոսքն ուղղեց նոր-ընծաններին՝ ներկայացնելով երկու կերպարներ՝ Ս. Վարդանին և Ս. Ստեփանոսին:

«Եւ լուայ զբարբառ Տեառն, որ ասէր՝ Զո՞ առաքեցից եւ կամ ո՞վ երթիցէ առ այս ժողովուրդ»:

«Եվ լսեցի Տիրոջ ձայնը, որ ասում էր՝ Ո՞ւմ առաքեմ կամ ո՞վ կգնա այդ ժողովրդի մոտ» (Եսայի Զ 8):

Սիրելի՛ նորընծա սարկավագներ. այսօր դուք, համաձայն Աստծո կամքի, փնօրհնությամբ ազգիս Վեհափառ Հայրապետ Գարեգին Երկրորդի, դարձաք այն յոթ ընտրյալները, որ առաքվում եք Տիրոջ ժողովրդին սպասավորելու: Կոչվում եք ձեր կյանքով և ձեր անձով Տիրոջ խոսքը մարմնավորել նրանց մեջ, որ լսելով լսեն և հասկանան, և տեսնելով տեսնեն և գիտենան: Խորհրդավոր է այս պահը նաև ինձ

Մի պահ ձեռնադրության արարողությունից

համար, քանզի այսօր միախառն կերպով վերակենդանացած և վերամարմնավոր-ված եմ տեսնում ձեր մեջ քաջ Վարդանի խիզախ ոգին և Սուրբ Ստեփանոսի անխախտ նվիրումը: Սուրբ Վարդան՝ արիության խորհրդանիշ, Սուրբ Ստեփանոս Նախավկա՝ հաստատուն հավատքի անշարժ վեմ. ահա երկու սուրբ անձինք՝ անու-րաց հավատքի, անխախտ սիրո և անչափ նվիրումի: Ոմանք կարող են կարծել, թե այս անձերն այլևս պատմությանն են պատկանում: Բայց լա՛վ իմացեք, անցյալը անցած չէ, ինչպես կասեր երջանկահիշատակ Գարեգին Առաջին Հայոց Հայրա-պետը: Եվ կենդանություն է մեզ համար այն իրողությունը, որ մշտապես թարմ է մեր հուշերում, մեր ապրումներում: Ինչպե՞ս մոռանալ և չհիշել, երբ քարաձիգների ան-

գութ հարվածներից ավելի ու ավելի էր զորանում երանելի Մտեփանոսը և անթարթ հայացքով իր կոչման բոցաշունչ փառքին էր նայում: Նա հաստատապես գիտեր, որ նահատակվել Հիսուսի համար՝ նշանակում է ճաշակել կյանքի ծառից: Մեծ էր քաջ նահատակի հավատքը: Այն առավել գործ էր, քան խոսք, որ իր կենդանի վկայությունը եղավ քրիստոնեության և ընդհանրական Եկեղեցու ճշմարտացիության և վավերականության: Նախավկայի և այլ նահատակների հավատքի ուժով ապրեց, հետզհետե զորացավ Քրիստոսը մարմնավորող Ընդհանրական Եկեղեցին: «Եթէ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի... բազում արդիւնս յառնէ»:

Միրելիներ, դրանից հետո մոտ 300 տարի ստեփանոսյան հավատի և այդ քաջ ոգու ժառանգորդը դարձավ Մեծն Լուսավորիչ: Նա իր 14-ամյա աղոթալից արցունքներով Քրիստոսին միացրեց մեզ, ազգովին անբաժանելի անդամ և մասնիկը դարձրեց Ընդհանրական Եկեղեցու: Ծնվեց Մուրբ Մեսրոպը՝ առլեցուն բարեմասնություններով և առաքինություններով, որ հայրենասիրությունից մղված աստվածատուր գրով կերտեց մեր միտքն ու հոգին: Եվ այսուհետ քրիստոնեությունը հայի համար դարձավ միս ու արյուն: Ահա այդ կերտվածքից ծնվեց քաջ սպարապետ, ընտիր զորավար Վարդան Մամիկոնյանը: Նա ժառանգեց և իր մեջ միահյուսեց Նախավկայի արիությունը, մեծ Հայրապետ Լուսավորչի անխախտ հավատը և Մուրբ Մեսրոպի հայրենասիրությունը: Ավարայրի դաշտում՝ Տղմուտ գետի ափին, նա այդ հյուսվածքի բոցկլտացող լույսը շողարձակեց իր սրով և շլացրեց թշնամու չարախիզ հայացքը: Երկնային լույսով իմաստավորված, սեփական գրով քրիստոնեացած, քաջ Վարդանը ցույց տվեց բոլորին և մեզ էլ օրինակ ժառանգեց, որ իր անմական հավատի դեմ ոչ ոք կարող է դիմագրավել՝ ո՛չ հրեշտակ, և ո՛չ մարդիկ, սուր, հուր, ջուր և ամենայն դառն հարված: Գիտակից արիություն, անդրդվելի հավատ և սեր՝ ահա այս երեք առաքինության ուժով են կյանք տվել և 2000 տարի շարունակ պահպանել Քրիստոսի Եկեղեցին և մեր հայրենիքը: Եվ դուք, սիրելի սարկավագնե՛ր, երրորդ հազարամյակի շեմին ստացաք այդ ժառանգության իրավունքը: Եվ այսուհետ պիտի պահեք և պահպանեք ձեզ տված ժառանգությունը խոհեմությամբ, հավատքով, սիրով, անշահախնդիր նվիրումով, արիաբա՛ր: Որպես Վարդաններ՝ խոնարհեցրեք ձեր անձերը, որպեսզի բարձրանա ձեր կոչումը, անտրտունջ ծառայեցեք Քրիստոսի Եկեղեցուն և ժողովրդին: Միայն այդ դեպքում իրական կդառնա ձեր առաքելությունը: Լա՛վ իմացեք, որ դուք ընտրված եք համաձայն Տիրոջ խոսքի. «Բազում են կանչվածները, սակավ՝ ընտրվածները»: Եվ այս ուրախ պահին ես իմ աղոթքն եմ առաքում առ Աստված և հայցում Տիրոջ զորակցությունը, որ աստվածային շնորհի ուժով անխախտ հավատ, սեր և նահատակ սրբերի հրաբորբոք արի ոգին թափանցի ձեր հոգիներից ներս, որպեսզի իրականանա այն առաքելությունը, որին կոչված եք այսօրվանից ծառայելու: Եվ այս բացառիկ առիթով թեպետ Հայաստանից բացակայում է Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը, ես որդիական սիրով բարեմաղթություններն եմ փոխանցում Նորին Սրբությանը՝ իր անվանակոչության տոնի առիթով: Թող Բարձրյալն Աստված Իր տիրախնամ աջով զորավիգ, մարտակից լինի մեր Հայրապետին, պարգևի քաջառողջ և երկար

տարիների կյանք՝ ի պայծառություն Մայր Եկեղեցու, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առիթով կատարվեց Հայրապետական մաղթանք:

Մարտի 7-ին նորընծա սարկավագները, գլխավորությամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի և ճեմարանի փոխտնտես Տ. Բարկեն արդ. Սայրիյանի, ներկայացան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին:

Ազգիս Հայոց Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց նորընծաներին և մաղթեց Ստեփանոսի օրինակով մինչև վերջ հաստատ մնալ իրենց հավատքին, Ավետարանի ապտվածատուր լույսով լուսավորել մարդկային հոգիները՝ անմնացորդ կերպով ծառայելու առաքելահաստատ Եկեղեցուն և ժողովրդին:

Մասիս սարկավագ Իսայան

Ծնվել է 1978 թ. Էջմիածին քաղաքում:

1985-1991 թթ. սովորել է Էջմիածնի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1991-97 թթ. սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի բաժիններում:

1997-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Նելսոն սարկավագ Բաբայան

Ծնվել է 1978 թ. Տաթև գյուղում:

1985-94 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1994-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Հովհաննես սարկավագ Խաչատրյան

Ծնվել է 1979 թ. Երևան քաղաքում:

1984-1994 թթ. սովորել է Երևանի թիվ 192 դպրոցում:

1994-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Հրանտ սարկավագ Կոստանյան

Ծնվել է 1978 թ. Էջմիածին քաղաքում:

1984-1994 թթ. սովորել է Էջմիածնի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1994-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վարդգես սարկավագ Մայիլյան

Ծնվել է 1977 թ. Արմավիրի մարզի Արշալույս գյուղում:

1984-1992 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:
1992-1994 թթ. սովորել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանում:
1994-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արամայիս սարկավագ Մուրադյան
Ծնվել է 1976 թ. Էջմիածին քաղաքում:
1983-1993 թթ. սովորել է Էջմիածին քաղաքի թիվ 9 միջնակարգ դպրոցում:
1994-1999 թթ. սովորել է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում:
1999-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Լևոն սարկավագ Պանֆյորով
Ծնվել է 1977 թ. Երևանում:
1984-1988 թթ. սովորել է Երևանի Դանիել Վարուժանի անվան թիվ 89 միջնակարգ դպրոցում:
1988-1995 թթ. սովորել է Երևանի թիվ 68 միջնակարգ դպրոցում:
1995-ից սովորում է Վազգենյան հոգևոր դպրանոցում:

ՀՐԱՆՏ ՍՐԿ. ԿՈՍՏԱՆՅԱՆ
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Հ լսարանի սան